

ընդ ընկերութեան գլուխ կանգնեցան և յանձն առան ղեկավարել ընկերութիւնը: Կարող են, արդեօք, ժողովրդի իրէպական յափշտակութեան րօպէական տրամադրութիւնից օգուտ քաղել՝ փողաւոր մարդիկ, հաշի մարդիկ, հարուստներ, փողի քսակներ, որոնք ընկերութեան հիմնադրութեան անմիջապէս գլուխ կանգնեցան գործին. կարող են, արդեօք, ուրիշներ ինչ մտցնել իրէպական անշահասէր զգացմունքներ այնպիսի մարդիկ, որոնք իրանք իրանց ամբողջ կենսաբեր ընթացքում միմիայն իրանց անձնական շահի մասին են մտածել:

Ուրեմն, ձեր կարծիքով կասեն մեզ, փոխանակ հարուստների, բարեգործական ընկերութեան ղեկավարներ, նրա զոյուլթեան առաջին րօպէից արդէն, պէտք է ընտրվէին մեր ինտելիգենցիային պատկանողները...

Հազիւ թէ գործը դրսնով աւելի լաւ կերթար, կը պատասխանենք մենք. մեր ինտելիգենցիան էլ իրան վաղուց արդէն ցոյց տուեց՝ որպէս զատարկ փառամոլութեան ետեւից ընկած, երեսին կեղծաւորութեան զիմարել ծածկած, փողաւոր, շահասէր, ագահ, չաղ պաշտօններ որոնող, անաշխատ, կանանց խողոր բաժինքի ետեւից ընկած, հասարակաց գրամներ վաճառող, հասարակութեանը անշահասէր, անձնութեամբ ծառայելու անընդունակ՝ վերին աստիճանի անհամակրելի մարդկանց մի շրջան...

Ուրեմն ո՞ւմ պէտք է ընտրել...

Միմիայն ազնիւ մարդկանց, անշահասէր մարդկանց, հասարակաց օգուտին ան ձեռքէր մարդկանց, կը պատասխանենք մենք, այնպիսի մարդկանց, որոնք բացի իրանից որ իրանք են անձնութեան անշահասէր, ընդունակ են և հասարակութիւնը ընտելացնել անձնութեան, անշահասէր գաղափարներ, ընդունակ են ամբողջ րօպէական իրէպական տրամադրութիւնից օգուտ քաղել և շարունակել տարիներ ընթացքում պահպանել նրա մէջ այդ յափշտակութիւնը, այդ կրակը...

Չունէք այդ տեսակ մարդիկ, — ուրեմն ի՞նչի էք դանդաղում թէ ոչ մի գործ ձեր մէջ առաջ չէ գնում, թէ բարեգործական ընկերութեան պէս համակրելի և անհրաժեշտ հասարակաց հաստատութիւն մեռնելու վրա է...

Չունէք այդ տեսակ մարդիկ, ուրեմն ի՞նչի էք դանդաղում, որ համ հասարակութիւնն է հետզհետէ ստուշում դէպի մեր միակ բարեգործական ընկերութիւնը, համ էլ գործին գլուխ կանգնած մարդիկ, որոնք նոյն խմորից են թխված, անընդունակ են շարունակ վառ պահել հասարակութեան մէջ վերացական զգացմունք դէպի բարին, դէպի մարդկային քաղաքակրթութիւնը, դէպի հասարակաց ինքնազարգացումն ու ինքնօգնութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՆԻ ՁՏԵԼԸ

Շատ անգամ չը նայելով գինեգործի գործադրած բոլոր զգուշութիւններին, գինին պղտոր է մնում, լաւ չէ պարզում և ցանկացած աստիճանի կատարելագործութեան չէ հասնում: Այդ դիպուածում պէտք է դիմել արհեստական միջոցին — այն է գինին պիտի գտնուի:

Ընդհանրապէս գինիները պիտի մաքրել՝ յաճախակի մի տակաւից միւսը լցնելով, բայց այդ գործողութեան հետեանքն էլ այն է լինում, որ գինու գոյնը կտորվում է, նա կորցնում է իր շողողունութիւնը, այն փայլը, որը գինու գնահատութեան ժամանակ շատ նշանաւոր դեր է կատարում:

Ձտելու համար գործ են անում դանդաղան հիւթեր՝ ինչպէս ձուի սպիտակուցը և սոսիւնն է: Ձուի սպիտակուցը գործ են անում միայն կարմիր գինիների համար, իսկ սոսիւնը միայն սպիտակ գինիների համար:

Ձուի սպիտակուցի գործադրութիւնը: Եթէ գինին չէ պարզում, եթէ նա չէ ստանում իր ցանկացած փայլունութիւնը, այն ժամանակ պէտք է դառնի ինչպէս ասեցինք կարմիր գինիների համար գործ է անվում բացառապէս հաւի ձուի սպիտակուցը:

Այս թէ ինչ ձևով և ինչ չափով են նրան գործածում:

Ձտելու գործողութեան համար շատ մեծ նշանակութիւն ունի օրվայ եղանակը — պէտք է գերադասել պարզ և խաղաղ, բայց այդ մարտ, ապրիլ, օգոստոս և սեպտեմբեր ամիսներում աւելի դժուար է գտնել թէ ձուով և թէ սոսիւնով: Ամեն մի հինգ վերջի համար պէտք է վերցնել մի զոյգ թարմ անձն ձու:

Ձուն պիտի կտրել զգուշութեամբ, ձուի սպիտակուցը լցնել մի ամանի մէջ: Ամեն մի զոյգ ձուի սպիտակուցի վրա պիտի ցանել մի պլտուրանց սպիտակ աղ (ծովային աղը անպէտք է) անգամ մի թէլի բաժակ ջրի հետ լաւ հարել, մինչև որ սպիտակուցը լաւ խառնվի ջրի հետ և փրփուր կանգնի երեսին: Հենց որ այդ աստիճանին հասաւ, պէտք է լցնել տակաւու մէջ (համեմատ տակաւու մէջ պարունակած գինու քանակութեան) և մի փայտեայ ձողով լաւ խառնել:

Խառնելիս պիտի զգուշանալ, ձողը շատ ցած չը տանել, որ մի գուցէ տակաւնքն էլ տակնու վրա անի և դրանով գինին աւելի պղտորեցնի: (Լաւ խառնելուց յետոյ պիտի տակաւու բերանը փակել և 12—15 օր հանդիստ թողնել, որից յետոյ գինին կը պարզի և այդ ժամանակ կարելի է գինին յետ անել *):

Սոսիւնի գործադրութիւնը: Գինին մաքրելու համար գործ է գրվում շատ մաքուր սոսիւն, որը լինում է թափանցիկ, առանց համի և

*) Տես «Մշակ» 1889 թ. № 127 և 137.

հոտի: Ամեն 8 վերջը գինու համար պիտի վերցնել 1—1½ միլիալ սոսիւն, մկրատով լաւ մանր կտորել և ապա լցնել տաք գինու մէջ, որ լաւ հալվի ու խառնվի նրա հետ:

Ապա այդ սոսիւնախառն գինին լցնել տակաւու մէջ գինու քանակութեան համեմատ, լաւ խառնել ձողով, բերանը պիտի փակել և սոսիւնը թողնել 10—12 օր և ապա յետ անել:

Սոսիւնը գինու մէջ անվելուն պէս կաղմում է մի բարակ և փուլած ցանց ու կամաց կամաց ցած է իջնում իր հետ տանելով և գինու մէջ լողացող ու գինին պղտորող մասնիկները, հետեւապէս և գինին պարզեցնում է:

Թէ ձուի սպիտակուց գործ անելիս և թէ սոսիւն խառնելիս, գինին հանգստանալուց և պարզելուց յետոյ, պէտք է բաժանել գերդից և նոր տակաւու մէջ քաշել, քանի որ ձուի սպիտակուցը և սոսիւնը երկար ժամանակ ենթարկվելով գինու դանդաղան բաղադրութիւնների ազդեցութեանը, կը վերածվին և գինուն կարող են միանգամայն կոշմակել ու ձեւասկզբ եկել մատակարարել, որով և կը ձեւանան գինուն: Մանաւանդ եթէ տաք եղանակները վրա հասնեն գինին տակն ու վրա կը լինի և կը պղտորի:

Երբեմն էլ գինին սոսիւնում են և ապա ճանապարհ գցում, այնպէս որ գինին ճանապարհորդում է սոսիւնի վրա: Դա անում են այն ժամանակ, երբ ճանապարհորդութիւնը երկարատեւ չէ և տեւում է առ առաւել 8—12 օր: Այն ժամանակ գինին տեղ հասնելուն պէս պիտի հանգիստ տալ մինչև որ պարզի և ապա յետ անել:

Գինին գտնելու համար գործ են անում և այլ հիւթեր և նիւթեր, ինչպէս արիւն, կաթիլ, կասիւն և այլն: Բայց մենք խորհուրդ կը տանք գործածել միայն ձուի սպիտակուցը և սոսիւնը:

Կաթիլ կարելի է միայն քանակութեամբ գտնել և այն ժամանակ, երբ անմիջապէս դառն գինին պիտի գործածեն: Գինին գտնել շատ անգամ անհրաժեշտ է, բայց չը պէտք է ի չարք գործ դնել և եթէ գործադրվում է անձեռնհաս մարդկանց ձեռքով, կարող է խիստ կերպով ձեւանել:

Պէտք է աշխատել գինին պարզեցնել յաճախակի յետ անելով և միայն այն ժամանակ գինի ձուի սպիտակուցի և սոսիւնի գործադրութեանը, երբ դա միանգամայն անհրաժեշտ է:

Կայ և մի այլ միջոց, որով գինին գտնում են, այն է քամ են գցում կտաւէ պարկերի միջոցով: Պարան ասում են «ֆիլտր» — քամի: Սովորական ֆիլտրները կտաւէ են և կոտակա: Ֆիլտրները ընդհանրապէս անպարտաւոր են, քանի որ գինին ծծվելով և կտաւի ծակոտիներով անցնելով օդի հետ չփվում է և ջարդվում և այդ պատճառով էլ կորցնում է իր շողողունութիւնը: Բայց այժմ կան այնպիսի կատարելագործված ֆիլտրներ, որոնք թոյլ չեն տալիս, որ գինին անմիջապէս օդի հետ չփվի: Ֆիլտրային շատ տարածված է Սիմոնդոսի ֆիլտր-պրեսը «Filtre presse»: Ինչ-

պէս առիթ ենք ունեցել ասելու, այժմ էլ անհրաժեշտ ենք համարում կրկնել, որ ընդհանրապէս շատ լաւ գինիները այսպիսի գործողութիւններին չեն ենթարկվում և այն գինիները, որոնք անցնել են դոյնանման գործողութիւններով, երբեք բարձր յատկութիւն ունեցող գինիներ չեն կարող լինել — նրանք կը լինեն միջակ և հասարակ:

Երևան.

Մ. Մուսիսյան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Պատահում է որ «Մշակի» բաժանորդները գանգատվում են թէ մեր լրագրի այս կամ այն համարը չեն ստացել և հաւատացած են, որ խմբագրութիւնը չէ ուղարկել: Պարտաւորութիւն ենք համարում յայտնել, որ մենք լրագրի համարները ամեն անգամ դրաւոր ցուցակի, կամ յայտարարութեան հետ միասին ենք ներկայացնում պատասխան և պատիւ մեզ ստացական է տրվում թէ՛ այս ինչ քաղաքներ ուղարկելու համար լրագրի այսքան համարներ ընդունվեցին: Գիտե՛ք բաժանորդներ լրագրի համարները գանգատվում է թէ «Մշակի» բոլոր համարները ստացաւ, իսկ № 3 չը ստացաւ. նայում ենք պատիւ մեզ տուած ստացականը և տեսնում ենք որ № 3 յանձնված է պատու, Վամարու ուղարկելու համար: Ուրեմն ինչով է մեղաւոր խմբագրութիւնը, քանի որ իր ձեռքումն ունի պատիւ ստացականը: Ուրեմն անձնութիւնը մեր կողմից չէ պլ պատասխան վարչութեան կողմից է: Թող բաժանորդները պատիւ պահանջեն:

ԻԳԻԻԻԻՅ մեզ դուռն են. «Այս տարի, ծննդեան տօներին, տեղիս գաւառագետի ամուսինը, տիկին Լ. Փիլիմոն, աղքատներին օգնելու մի գիղիցի օրինակ ցոյց տուեց. նա իր 7—9 տարեկան երեխաներին ճրագալցոյցի երեկոյան յօգուտ աղքատների «աւետիս» ասել տուեց մի քանի տներում: Անմեղ մանուկները չըթուցնեցին գիթիւն էլին ինչդուր յօգուտ աղքատներին: Հաւաքվեց այդ միջոցով 45 բուրլի, որը միւս օրը տասն և հինգ աղքատ ընտանիքներին բաժանվեց: Որքան, մի կողմից, գովելի էր տիկին Փիլիմոնի արածը, այնքան էլ, միւս կողմից, սպասելի էր, որ իր գիղիցիք աւելի առատաձեռն կը դոնվեն այդ դէպքում, մասնաւոր որ իր անց աղքատների համար էլին ինչդուր մասնակցներ:

Ախալցխայից պ. Գերբաս (Կեղծ անուն) խորում է մեզ տպագրել ի գիտութիւն հայ թարմանիչներին, որ ինքն արդէն սկսել է թարգմանել ժողովրդական ընթերցանութեան համար՝ Գարշինի «Четверь дня» գրքովը:

«Խլերի» լրագրի հաղորդում է, որ Լաւրիան ձմեռանի վրաց լեզուի պրոֆէսոր Խալաւաշիլի և նոյն ձմեռանի հայոց լեզուի պրոֆէսոր Գր. Խալաթեանց մեծ պատի ընթացքում վը կարդան տաս-տաս հասարակական լեկցիաներ:

ստեղծել էին որոշ պատիժներ և միջոցներ կարգապահութեան և համբարութեան ներքին խաղաղութեան համար: Այս այդ միջոցները և պատիժները. 1) Ամենից առաջ համբարութեան վարչութիւնը և հմուտ վարպետները դիմում էին բարոյական միջոցներին. — «Իսրաւ տի», եթէ մի որ և է անգամ, լինէր նա քարաւ թէ վարպետ, սկսեք ապրել անվայել կենցաղով, անէր խարդախութիւններ և խաբեքայութիւններ, համբարական վարչութիւնը առաջին անգամ բաւականաչափ էր խրատներով և յանդիմանութեամբ: Պատահում էր, որ իսկոյն նշանակում էին աւելի խիստ պատիժ, այն է սուղանք: 2) Տուգանքը լինում էր դրամական և ըստ մեծի մասին տըրվում էր յօգուտ համբարական գանձի: Պատահում էր, որ դրամի փոխարէն տուգանք անում էին մեղաւորները յօգուտ մի որ և է վանքի, կամ եկեղեցու, կամ վերջապէս համբարի պատրօնի պատկերի. այդ տուգանքը, օրինակ, Ախալցխայում, բաւական մեծ էր լինում, — 2 մինչև 6 օխա, այսինքն 6 մինչև 18 ֆունտ: Եթէ պատժվածը չէր պատկանում Հայաստանեայց ուղղափառ առաքելական եկեղեցուն, այլ մի ուրիշ դատարանին (օրինակ կաթոլիկութեան, կամ յունադատարանութեան) մտնից բացկացած տուգանքը համբարութիւնը յատկացնում էր նրա մայր եկեղեցուն, կամ մի որ և է սրբին: Այս տեսակ հաւասարութիւն, կամ ազատամտութիւն մենք չենք նկատում եւրօպական ցէխերի կենան:

քում: Վերջին տեսակի տուգանքը նշանակվում էր այն դիպուածում, երբ յանցանքն ունէր կրօնական բնուորութիւն, — պատ ուտելու, հաղորդութիւնից խոյս տալու, ամենից չը պահելու համար և այլն: Բացի տուգանքից, մեղադրեալը պարտաւոր էր վարձատրել իր հակապիտոյի նրա համար ձեւաւորելի չափով: Տուգանքի քանակութիւնը հասնում էր 50 կօպ. մինչև 50 բուրլի: 3) Տուգանքից աւելի խիստ պատիժ համարվում էր բանադրանքը կամ խանութի ժամանակաւոր փակումը: Բանադրանքը տեսնում էր մի քանի ժամից մինչև երկու-երեք շաբաթ, որը համարվում էր շատ վնասակար, թէ առևտրական տեսակէտից, թէ վարպետի բարի անուան: Եւ «հեղինակութեան» համար: Այս մի տեսակ անպատուութիւն էր. այս տեսակ պատիժը նշանակվում էր գլխաւորապէս այն դիպուածներում, երբ վարպետն իր օրակա առևտուրի ժամանակ «մուշտարներին» խաբում էր, խարդախութիւն էր անում: Եւ այն պատիժը նշանակվում էր նմանապէս այն ժամանակ, երբ վարպետն իր համբարակցիներին դէմ խարդախութիւն էր անում. պատիժի միտքն այն էր, թէ այդպիսի մարդը արժանի չէ արհեստաւորների շարքում գործելու: 4) Աւելի ծանր պատիժ համարվում էր վարպետի պատուի համար հրապարակական անուան: Այս պատիժը արտայայտվում էր նրանով, որ նրա վատ դուրս եկած ապրանքը կպցնէին տալիս խանութի ճակատին, որպէս

ղի ամեն մարդ լմանայ, թէ այդ խանութում իրան կարող են «խարել», — վատ միջոցից ապրանք ծախել, գինը աւելի պահանջել քան թէ հարկն է: Այս նշանակվում էր գլխաւորապէս խարդախ և խաբեքայ վարպետներին, եթէ նրանք չէին խրատվում ոչ յանդիմանութեամբ, ոչ տուգանքով և ոչ բանադրանքով: Այդ տեսակ պատիժը համահասարակ էր խանութի վերջնական փակմանը, որովհետև վարպետն անկարող էր լինում մի որ և է գործ չէին և շարունակել իր արհեստը: 5) Վերջնական աքսորումը արհեստից, որ անպայմանցներին լսողում անուանվում է «բառահ», կամ «բէռահ»: Այս տեսակ պատիժը նշանակվում էր բարոյապէս բոլորովին փչացած վարպետների համար, եթէ նրանք համարենտի մէջ միշտ խարդախ, խաբեքայ, հարեանի վնասող են երևում, համար անբարոյական կենանք են վատում, — իրանց աշակերտներին անբարոյականացնում, կամ համբարակցի կնոջ հետ պախարակելի յարաբերութիւն սկսում:

6) Աքսորումն արհեստաւորներին ամբողջ դասակարգի շրջանից, սա մի տեսակ արտաքիլ պատիժ էր, որովհետև արհեստաւորներին ամբողջ դասակարգը ստիպված էր կտրել պատժվածի հետ իր բոլոր յարաբերութիւնները, — քրքրել նրան ջուր չէր բերում, հացթուղը հաց չէր ծախում, կոշիկակարը — կոշիկ, վաճառականը — հարկաւոր իրեն, բաղկալը — միլի, մանրավաճառը իր ապրանքը, դերձակը — դեղատ և այլն: Պատահելիս նրա

հետ ոչ խօսում էին, ոչ բարեւում: Այս պատիժն ենթարկվածն ապրում էր առանձնացած, ինչպէս Կայնը: Բանադրանքից առաջ պատահում էր, որ ամբողջ համբարութիւնը ձեռքներում վառած մի ան առած, ժողովում էր պատժվածի տանը, ուստի նրան և նրա ամբողջ ընտանիքը նպաստակով: Վառած մոտեղը հանգցնում էին ուրբում, արտասանելով հետեալ անձնքը. «Աստուած քո օջախն էլ մոտերի պէս հանգցնի, քո որդոց և քո շինքը այսպէս ուրիշ»: Կարելի է երևակայել պատժվածի դրութիւնը, ի նկատի ունենալով մի նախապետական ժողովրդի աշխարհայեցողութիւնը: Նոյնից և անձնքի վերաբերմամբ: Մեր ապագայ աշխատութեան մէջ ընթերցողը վը տեսնի, որ մի և նոյն, կամ համանման պատժ գործադրվում էր եւրօպական ցէխերի կենսութեան ինչ յանցանքի համար էր նշանակվում այս անպատիժը: Որքան մեղ աշողից լուսաբանել այս անպատիժը հարցը, ահա թէ ինչ տեսակ գործերի համար յանցաւոր ենթարկվում էր այս պատժին — սրբապօղութեան, մատնողութեան և դաւաճանութեան համար: Բացի սրանից, օրերով անուշը արատաւորելը և հետը չը պատկելը, հալածութեան կարգ ու կանոնին չը հնազանդվելը նոյնպէս համարվում էին բաւականին հիմունքային տեսակ պատժն ենթարկելու:

(Կը շարունակվի)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԳԻՐՆԵՐ

ՎԻԵՆԱ, 23 յունվարի: Հրատարակված է կայսերական հրովարտող, թե ֆինանսների մինիստր Գրանտիցի, համաձայն իր խնդրի, հիմնադրված է պատճառով, արձակված է պաշտոնից, իսկ նրա տեղ ֆինանսների մինիստր է նշանակվում արդարադատության մինիստրության կառավարիչ զոկտոր Շտեյնբախ: Գրանտիցի կայսրը չնորոգել է և Ստեֆանի չքանչքան առաջին աստիճանի, նշանակելով առաջինի ժողովի անդամ ցմահ: Այդ հրատարակված ընդունված է զոհաբերման մասնաճյուղի անդամների կողմից:

ԼՈՂՎՈՐ, 23 յունվարի: Այսօր թագաժառանգ Զիսարիցի ռեզիդենտը Մարիա: Մեծ իշխան Գեորգի Ալեքսանդրովիչ, որն, ինչպես յայտնի է, հիանալի է տեսնում, վերադառնում է «ԱՃԱՌԱԼԵ ԿՈՐՆԻԼՈՎ» նաւով Եւրոպա: Միւս զինուորական նաւերը ուղևորվեցան Կոլոմբո, ուր կը լինի թագաժառանգ Զիսարիցի:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 24 յունվարի: Ներքին գործերի մինիստրության խորհրդի անդամ Ֆեոդոր Կարլովիչ Գիրս վախճանվեց: Ռուսաստանի ուղարկված ֆրանսիացի օֆիցերները այցելեցին Կոնստանտինոպոլիսը և զինուորական կանոնները զանազան կրթության զանազան բաժինները մոնիթորինգի և ծրարին:

ՄՍԿՎԱ, 24 յունվարի: Երկաթուղիների երկրորդ խմբի հիմնադրող Ներսիսյան ժողովը, վճռեց արտոնագրով տարիքի նշանակել բանտերների համար, 30-ից մինչև 40/50 զինվորով, այդ նպատակով մտադրված կայ հրատարակել վկայական գրքերի, որից օգտվելու կանոնները կը մշակվեն ժողովից յետոյ: Այդ արտոնագրով տարիքի վերաբերված համաձայնություն չկայտնեցին շատ նաւադաշտային ընկերություններ:

ՎԻԵՆԱ, 24 յունվարի: «Pester Lloyd» լրագրի ասելով, երջնից ֆրանց-Ֆերդինանդ տառել է իր հետ աւստրիական կայսրի ինքնագիր նամակը թագաւոր կայսրին:

ԱՍՍԻՍԿԱ, 25 յունվարի: Աֆգանական էմիր Աբդուրահման մահուան մասին լուրերը հեռագիրներով հաղորդած լուրը, բուխարայից ստացած

տեղեկություններին համաձայն, անհիմն է: ՎԻԵՆԱ, 25 յունվարի: «Fremdenblatt» լրագրեր երջնից ֆրանց-Ֆերդինանդ զինվորական աստիճանից հեռացվելով խոսելով, ասում է, թե չը նայելով որ այդ ճանապարհորդները ուրախալի երեւոյթ պէտք է համարել, սակայն սխալ կը լինել քաղաքական միտքի նշանակությունը մտքը, որի համար ոչինչ պատճառներ չը կան: Ռուսաց թագաւորի խաղաղասիրտները, որը իր նպատակն է համարում խաղաղության բարեկեցիկ պահպանել Ռուսաստանի և Եւրոպայի համար, մեզ նայեալ յայտնի է, որպէս Նրան Աւստրո-Ունգարիայի անշահաւոր արեւելեան քաղաքականությունը: Երջնից ֆրանց-Ֆերդինանդ իր սրտում կը տանէ Միտայեի պատերի յիշատակը, որի սղղամտութիւնը, անկեղծութիւնը և հոգեկան յատկութիւնները խորին և ընդհանուր յարգանք են ներշնչում:

ՏԵՂԵԿԱՑՈՅՑ

ԱՆԳՐԱՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՒԹՅՈՒՆ
Փաստային գնացքը ուղևորվում է
ԹԻՖԼԻՍԻՑ ԴԵՎԻ ԲԱԹՈՒՄ . . . 8 ժ. 40 ր. առաւ.
ԲԱԹՈՒՄԻՑ ԶԱՐԻՍ Ե ԹԻՖԼԻՍ . . . 11 > 8 > երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ ԴԵՎԻ ԲԱԹՈՒՄ . . . 12 > 8 > երեկ.
ԲԱԹՈՒՄԻՑ ԶԱՐԻՍ Ե ԹԻՖԼԻՍ . . . 7 > 40 > առաւ.
Ապրանքա-ճանապարհորդական գնացքը
ԹԻՖԼԻՍԻՑ ԴԵՎԻ ԲԱԹՈՒՄ . . . 3 ժ. 10 ր. ցերեկ.
ԲԱԹՈՒՄԻՑ ԶԱՐԻՍ Ե ԹԻՖԼԻՍ . . . 8 > > > առաւ.
ԹԻՖԼԻՍԻՑ ԴԵՎԻ ԲԱԹՈՒՄ . . . 9 > 45 > առաւ.
ԳԱՆՁԱԿԱՑ ԶԱՐԻՍ Ե ԹԻՖԼԻՍ . . . 8 > 20 > երեկ.

ՌՈՍՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՆԱԿԱՆ
Ամանապահները երկեկություն
ԵՐԵՎԱՆԻՑ ԵՐԵՎԱՆԻՑ ԵՐԵՎԱՆԻՑ 4 ժամին,
չոգենաւ Բաթումից ուղևորվում է Օղէտա՝ Սուխումի և Նովորոսիսկի վրայով:
ՀԻՆԳՇԱԿԻՑ ԵՐԵՎԱՆԻՑ ԵՐԵՎԱՆԻՑ 4 ժամին, ուղևորվելու Նովորոսիսկի վրայով:
ԵՐԵՎԱՆԻՑ ԵՐԵՎԱՆԻՑ 8 ժամին երեկոյան, չոգենաւ Բաթումից նաւահանգիստների վրայով:
ԵՐԵՎԱՆԻՑ ԵՐԵՎԱՆԻՑ 7 ժամին երեկոյան, արտասահմանեան ընկալի Կ. Պոլսի:

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յուլիան 27-ին, կիրակի օր, առաւօտեան 11 ժամին, Բամպեանց եկեղեցում, պատարագից յետոյ կատարվելու է Ալեքսանդրովիչի հայոց դպրոցի տեսուչ երիտասարդ զրող հանգուցեալ ԲՐԻՍՏԱՓՈՐ ԹԱԿԵՆՍԵԱՆԻ հոգեհանգիստը: Հանգուցեալի յիշատակը յարգողները հրաւիրվում են ներկայ լինելու հոգեհանգիստին:
1—1

ԵՐԱԿՈՒՄ Ե ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ
ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԻ
Յիսնամեայ գիտնական և մանկավարժական գործունէութեան
ՅՈՐԵԼԻՆԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
Հանդերձ նրա պատկերով — խմբագրութեամբ Գր. Խալիթեանի, գինն է 1 ռ. (ճանապարհածախս 20 կոպէկ).
Անմիջապէս խմբագրողից ստացողները վճարում են 1 ռ.
Հասցէն՝ Լազարեան ճեմարան. — Մոսկովա:
1—3

Питательный напиток
Чистый Какао
Блокерр
ԿԱԿԱՍ
Թաղ նստում է միայն 4 կոպ.
Բաղական պատրաստութիւն.
ՄԱՐԿԱՆ ԵՐ ԱՆՆԱԿԱՆ ՓՈՇԻ.
Աւազարկելու է անողջացողները և երեխաների համար.

Լոյս տեսաւ
և վաճառվում է բոլոր հայ գրավաճառանոցներում և «Մուրճի» խմբագրատանը
ՍԵՒ ԼԵՆԻՆԻ
Ժողովրդական գրքերի, գրեց Յարուժիկ Ղարա-
զիօզեանց: Գինն է 10 կոպ.
1—2
Լոյս տեսաւ
Ժողովրդական ընթերցանութեան համար
«ՊՍՏԻԿ Ե ԲԱՅՑ ՉՍՏԻԿ Է»:
Վ. Լուկինովիչ
Գինը 5 կոպէկ:
Երկրում է գրավաճառանոցներում:
Լոյս տեսաւ
Ժողովրդական ընթերցանութեան համար
ԽՕԼԵՐԱ
ԵՒ ՆՐԱ ԱՌԱՋԻ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ
ԲԺ. Տէր-Գրիգորեանի (Թիֆլիսեցի)
Գինը 5 կոպէկ.
Լոյս տեսաւ
Ժողովրդական ընթերցանութեան համար
ԱՅՆՏԵՂ ԵՒ ԱՅՍՏԵՂ
Գրիգոր Արծրունու
Գինը 10 կոպ.
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Ժողովրդական ընթերցանութեան համար
ԱՐՆԱԳԻՆ
Լէօն:
Գինը 7 կոպէկ:
վաճառվում է գրավաճառանոցներում:

Յ Ա Յ Տ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ա. Ի. ՖԻԻԼԻՐԻ ՑԻՐԿԸ

Այսօր, շաբաթ օր, 26-ին յունվարի, կը տրվի արտակարգ մի ներկայացում: Վերջում, հասարակութեան խնդրից, երկրորդ անգամ կը զրվի «Իվան Զարեկի» պանտոմիմը:

Վաղը, կիրակի, լինելու են երկու տոնական ներկայացումներ, յերեկվայ ներկայացումը, ժամը 2-ին, պակասեցրած գներով և երեկոյան ներկայացում, սովորական գներով:

Պատրաստվում է «Թամար» և «Ռուսների ճակատամարտը կաբարդինների դէմ» պանտոմիմները:

Ձի հեծնելու դասեր առնել ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել ցիրկի ընդհանուրին՝ Բինեամինին: Այլ և ընդունվում են ձիեր՝ վարժեցնելու համար:
Ա. Ի. ՖԻԻԼԻՐ

ԿԻՆ-ԲԺԺԵՎ ԻՍՏԱՎԱԿԱՆ

Վանքի Մեծ փողոցի և Մուխրանսկի փողոցի անկիւն, տուն Ջանշինկի: 4—5

ՀԱՂՈՒԵԿՁԻԹ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

գ31-ն Դեկտեմբերի 1890

Պ Ա Հ Ա Ն Զ Ք				Պ Ա Ր Տ Ք			
Թիֆլիսում		Բազուի և Բաթումի բաժն.	Ընդամենը	Թիֆլիսում		Բազուի և Բաթումի բաժն.	Ընդամենը
1. Դրամարկ (առձեռն թղթադրամ).....	129,994—36	182,808—23	312,802—59	1. Հիմնական դրամադրու.....	1,000,000 —	—	1,000,000 —
2. Ընթացիկ հաշիվ Պետական Բանկ. բաժնում.....	69,525—37	161,000 —	230,525—37	2. Պահեստի դրամադրու.....	179,500—64	—	179,500—64
3. Զեղչումն (Disconto) մուրհակայ երկու ստորագրություններ.....	2,651,318—76	998,039—01	3,649,357—77	3. Դրամական աւանդներ՝			
4. Զեղչումն տոկոսաբեր թղթի, կտրոն. և այլն.....	21,057—72	1,447—03	22,504—75	ա) Պայմանաժամով.....	2,307,323 —	263,959 —	2,571,282 —
5. Փոխառությունները գրավաճառում՝				բ) ԳՊահանջ.....	230,478 —	55,190 —	285,668 —
ա) Պետությունից ապահ. տոկոսաբ. թղթերի.....	1,286,323—35	370,429 —	1,656,752—35	գ) Ընթացիկ հաշիվով հասարակ.....	829,566—81	966,842—84	1,796,409—65
բ) Պայմանաժամով.....	482,757 —	8,495 —	491,252 —	դ) Գրավաճառում.....	—	130,958—41	130,958—41
գ) Գրավաճառում.....	—	38,368 —	38,368 —	4. Փոխառությունները պետ. քաղաքի թիֆլ. բաժն.	143,449—52	—	143,449—52
դ) Ոսկւոյ և արծաթի.....	—	82,605—58	82,605—58	ապահովված զեղչեալ մուրհակներով.....	—	—	—
6. Բանկի պատասխանալ տոկոսաբեր թղթեր.....	364,620—60	36,523—48	401,144—08	5. Մասնաւոր ընթացիկ հաշիվ պետ. քաղաքի թիֆլ. բաժն.	220,828—60	—	220,828—60
7. Ոսկւի և արտասահմանի փոխանակազրեր.....	31,389—41	12,197—96	43,587—37	6. Պայմանաժամով.....	115,494—69	—	115,494—69
8. Թղթակիցներ՝				7. Թղթակիցներ՝			
ա) Նոյս հաշիւը (Loro).....	8,876,736—21	—	8,876,736—21	ա) Նոյս հաշիւը (Loro).....	8,958,674—27	—	8,958,674—27
բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	10,519,416—72	—	10,519,416—72	բ) Բանկայի հաշիւը (Nostro).....	10,483,330—48	—	10,483,330—48
9. Բաժնիկների հաշիւը կենտրոն. վարչութեան հետ.....	452,282—83	—	452,282—83	8. Բաժնիկների հաշիւը կենտ. վարչութ. հետ. կենտրոն. վարչութ. հաշիւը բաժնի. հետ.....	144,663—73	453,904—48	453,904—48
կենտրոն. վարչութեան հաշիւը բաժնիկների հետ.....	—	119,763—26	119,763—26	9. Բանկայի բաժնետոմսերու անվճար կտրոնները բաշխը 1882, 1883, 1884, 1885, 1886, 1887, 1888 և 1889 թվերին.....	3,849—40	—	3,849—40
10. Բողոքում մուրհակներ.....	54,726—62	—	54,726—62	10. 1886, 1887, 1888 և 1889 թվերին.....	—	—	—
11. Պայմանաժամով անցուցուած փոխառություններ.....	14,675 —	14,300 —	28,975 —	11. Թիֆլ. բաժն. զեղչեալ մուրհակներով.....	80,801—46	43,128—26	123,429—72
12. Ընթացիկ ծախսեր.....	50,617—66	26,492—87	77,110—53	12. Ստացուած տոկոսներ և յանձնարարականներ.....	259,100—49	104,165—48	363,265—97
13. Կանկարայի և սկզբնական ծախսեր.....	3,068—82	2,752—30	6,821—12	13. Փոխանցիկ դուռններ.....	59,209—46	39,107—74	98,317—20
14. Յետ ստացուելիք ծախսեր.....	7,260—12	1,034—49	8,294—61				
Բ. Ա.	25,015,770—55	2,057,256—21	27,073,026—76	Բ. Ա.	25,015,770—55	2,057,256—21	27,073,026—76